# Ոստիկանության կողմից քաղաքացիներին ծառայությունների մատուցման ոլորտում հայտնաբերված կոռուպցիոն ռիսկերի և դրանց չեզոքացմանը և (կամ) նվազեցմանն ուղղված գործողությունների նախնական ծրագիր

**Ոստիկանության կողմից քաղաքացիներին ծառայությունների մատուցման ոլորտում հայտնաբերված կոռուպցիոն ռիսկերի և դրանց չեզոքացմանը և (կամ) նվազեցմանն ուղղված գործողությունների նախնական ծրագիր**

| *Կոռուպցիոն ռիսկ* | *Խնդրի բովանդակություն* | *Ռի<br>նվ<br>գոր* |
|---|---|---|
| 1. Հստակ չէ  ոստիկանություն ընդունվող անձանց ըստ ստորաբաժանումների բաշխման գործընթացը: | ՀՀ Ոստիկանության համակարգ աշխատակիցների ընդունելությունը իրականացվում է «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքով, սակայն օրենսդրությամբ հստակեցված չէ ըստ առանձին ստորաբաժանումների՝ ճանապարհային ոստիկանության (այսուհետ՝ ՃՈ), անձնագրային, համայնքային ոստիկանություն և այլն, ընդունվող աշխատակիցների բաշխման գործընթացը, ինչն էլ հայեցողական մոտեցման հնարավորություն է ընձեռում: | Ներ<br>նա<br>կոն<br>հա<br>մա<br>պա<br>թե<br>ընթ |
| 2. Հստակ չէ ՀՀ Ոստիկանության համակարգում աշխատանքի անցնելու ժամանակ սահմանվող փորձաշրջանի հաջողությամբ ավարտելու կամ տապալելու գնահատումը: | ՀՀ Ոստիկանության համակարգ ընդունվելու ընթացակարգիպարտադիր մաս հանդիսացող փորձաշրջանի գնահատման չափանիշներ առկա չեն, ինչն էլ հայեցողական մոտեցման հնարավորություն է ընձեռում: | Ներ<br>նա<br>ոս<br>աշ<br>պա<br>գն |
| 3.ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից կոռուպցիոն վարքագծից զերծ մնալու համար անհրաժեշտ,  միջազգային չափանիշների պահանջները արտացոլող գիտելիքների ոչ բավարար մակարդակ: | Ոստիկանության աշխատակիցների թե պատրաստումը, թե վերապատրաստումը իրականացնող ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի վերապատրաստման ծրագրերում պատշաճ մակարդակով ուշադրություն չի դարձվում կոռուպցիոն վարքագծից զերծ մնալու համար անհրաժեշտգիտելիքների և հմտությունների ձևավորմանը: ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ծրագրերում ներառված | 1.Վ<br>կրթ<br>ծրս<br>կոռ<br>գի<br>ձև<br>դա<br><br>2.Լ<br>ծա |

| | | |
|---|---|---|
| | «էթիկա» դասընթացը բովանդակային առումով չի պատասխանում այն հարցերին, որոնք անհրաժեշտ են աշխատակիցների՝ կոռուպցիոն վարքագծից զերծ մնալու համար անհրաժեշտ գիտելիքներն ու հմտությունները ապահովելու համար: Վերապատրաստումների ժամանակ անհրաժեշտություն է առաջանում ներգրավել մարզերում ծառայություն անցնող անձանց, ինչն առավել արդյունավետ կլիներ  առցանց մեխանիզմով վերապատրաստումների ապահովման պարագայում: | դրս<br>ուշ<br>բա<br><br>3.Մ<br>ծա<br>վեր<br><br>4. Ն<br>աշխ<br>վեր<br>լրա |
| 4.ՀՀ ոստիկանության համակարգի աշխատակիցների սոցիալ-տնտեսական վիճակի ոչ բավարար մակարդակ: | Սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման սահմանափակ հնարավորությունների պատճառով գրանցվում է ՀՀ Ոստիկանության համակարգից հոսունություն, Համակարգում ծառայության գրավչության նվազում, ինչն էլ հանգեցնում է նրան, որ թափուր աշխատատեղերը համալրվում են պատրաստվածության ավելի ցածր մակարդակ ունեցող, վերապատրաստում անցնող կադրերով: Միաժամանակ, նման պարագայում բարձր է ոստիկանության աշխատակցի կողմից ոչ օրինական ճանապարհով սոցիալ-տնտեսական վիճակը բարելավելու հավանականությունը: | 1. Ն<br>նա<br>Ոսս<br>աշխ<br>հաս<br>հաշ<br>գու<br>ցգր<br>ուղ<br>ձեռ<br>սպ<br><br>2.Ն<br>զբս<br>մա<br>հես<br>անչ<br>տես<br>ծա<br>ավ<br>բջջ<br>մա |
| 5. Ոստիկանության աշխատակիցների կարգապահական պատասխանատվու-թյան ենթարկելու գործընթացի իրավական որոշակիության և կանխատեսելիության ոչ բավարար մակարդակ: | Թեև ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ Հանրային ծառայության մասին» 2011 թ.-ի մայիսի 26-ի,  «Ոստիկանությունում ծառայության մասին» 2002 թ.-ի հուլիսի 3-իՀՀ օրենքներով, 2005 թ.-ի ապրիլի 11-ին ընդունված ՀՀ Ոստիկանության կարգապահական կանոնագրքով նախատեսված են Ոստիկանությանաշխատակիցների էթիկայի կանոնները, սակայն  դրանցում | Ներ<br>նա<br>ոսս<br>կան<br>կար<br>պա<br>խա<br>կար<br>կիր |

| | | |
|---|---|---|
| | արտացոլված դրույթները հստակ չեն՝ ոստիկանության աշխատակցի՝ էթիկայի պահանջներին համահունչ վարքագծի ձևավորման առումով, բացակայում են շահերի բախումը պարզաբանող դրույթները: Մինչդեռ այդ դրույթները հիմք են հանդիսանում ոստիկանության աշխատակիցների կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար: | Ապ<br>պա<br>ան<br>նկ<br>կա<br>պա<br>իր<br>իր<br>գա<br>աս |
| 6. Վարորդական վկայականների տրամադրման քննական գործընթացի՝ պրակտիկ վարման ստուգման ընթացքում թափանցիկության և կանխատեսելիության ոչ բավարար մակարդակ: | Վարորդական իրավունքի վկայական ստանալու գործընթացը կանոնակարգված է «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» 2005 թ.-ի հուլիսի 8-ին ընդունված ՀՀ օրենքով  և ՀՀ Կառավարության «Վարորդական վկայական ստանալու համար քննություններ ընդունելու և վարորդական վկայական տալու կարգը, վարորդական վկայական ստանալու համար պարտադիր ներկայացնելու ենթակա փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև ազգային ու միջազգային վարորդական վկայականների ձևերն ու նկարագրերը սահմանելու մասին» 2008 թ.-ի սեպտեմբերի 18-ի ¨ 1158-Ն որոշմամբ: Սահմանված կանոնակարգման համաձայն՝ քննությունն անցկացվում է երկու փուլով՝ տեսական/հոգեբանական թեստ և պրակտիկ/գործնական: Գործնական վարման ընթացքում մեծ է հայտեցողական մոտեցման հնարավորությունը, քանի որ այդ գործընթացը չի տեսանկարահանվում, մեքենայի ներսում խոսակցությունը, առաջադրանքները, դրանց կատարման աստիճանը հրապարակային չեն, ինչն էլ հայտեցողական մոտեցման հնարավորություն է ընձեռում:  Մարզերի մեծ մասում վիճակն առավել անմխիթար է՝ քննական ավտոդրոմների և անհրաժեշտ բոլոր տրանսպորտային միջոցների բացակայության պարագայում: | 1.Ա<br>անց<br>հա<br>միջ<br>վեր<br>հեռ<br>ձեռ<br>մար<br>հա<br><br>2. Ա<br>արւ |
| 7. Վարորդական վկայականների տրամադրման քննական գործընթացի՝ տեսական  ստուգման ընթացքում թափանցիկության և կանխատեսելիության ոչ բավարար մակարդակ: | Վարորդական վկայականների տրամադրման  քննական գործընթացի՝ տեսական քննության ժամանակ, հաճախ պայմանավորված կազմված թեսթերում հանդիպող հարցերի պարզաբանման անհրաժեշտությամբ, քննություն ընդունողները մոտենում են թեսթավորում հանձնողներին, ինչը կոռուպցիոն ռիսկ է | 1.Ս<br>հա<br>կոր<br>քնն<br>հնա<br><br>2.Ա<br>գոր |

| | | |
|---|---|---|
| | պարունակում: | իրա |
| 8. Անձնագրային ծառայության սպասասրահներում հերթերի կանոնակարգման բացակայություն | Հերթերի կանոնակարգման բացակայության պարագայում ավելի շուտ սպասարկվելու հնարավորությունը կոռուպցիոն ռիսկեր է պարունակում: | ՀՀ վար ծառ անձ ծառ տեղ տեղ |
| 9. ՀՀ-ում երթևեկության նշանների, գծանշումների, լուսացույցերի տեսանելիության ապահովման գործընթացում ֆինանսավորման աղբյուրների, պարբերականության, պատասխանատուների,Տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ) և ՃՈ հարաբերակցության հստակ կանոնակարգման բացակայություն: | Օրենսդրական մակարդակում հարցը կանոնակարգված է, սակայն գործնականում խնդիրներ են առաջանում լուսացույցների տեղադրման, տեսանելիության, գծանշումների, երթևեկության նշանների առկայության հետ կապված ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ ՀՀ մարզերում: Գծանշման համար պատասխանատվությունը հաճախ կրում է տեղական ինքնակառավարման մարմինը, որն էլ իր պարտականությունների կատարման գործընթացում թերացումները բացատրում է նյութական միջոցների ոչ բավարար քանակով:Տեղական ինքնակառավարման մարմնի և ՃՈ հարաբերակցությունը այս բնագավառում ունի հստակեցման և համակարգման անհրաժեշտություն՝ երթևեկության անվտանգությունն ապահովելու, ինչպես նաև նշված թերացումների հետևանքով վարորդների կողմից արձանագրված խախտումները, դրանց համար պատասխանատվությունը բացառելու նպատակով: | Մշտ նշա տեղ ամ նպ սահ ֆին վեր վեր |
| 10. ՀՀ  անձնագրային և վիզաների վարչության գործառույթների վերաբերյալ բնակչության իրազեկման հստակ գործող, համակարգված տեղեկատվական համակարգի բացակայություն: | ՀՀ Ոստիկանության վեբկայքը ընդգրկուն տեղեկատվություն է պարունակում իր կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ, սակայն դրանում բացակայում է ՀՀ անձնագրային և վիզաների վարչության գործառույթների վերաբերյալ ենթաբաժինը, ինչը թույլ չի տալիս քաղաքացիներին անմիջականորեն գտնել այդ ոլորտին վերաբերող իրենց հուզող հարցերի պատասխանները:Մինչդեռ իրազեկման ցածր մակարդակն է իր մեջ կոռուպցիոն ռիսկ պարունակում: | Ապ անձ վեբ շահ |
| 11. Մասնավոր պահնորդական գործունեության լիցենզավորման, որակավորման ստուգման ընթացակարգի ոչ հստակ | Մասնավոր պահնորդական գործունեության լիցենզավորման գործընթացը կանոնակարգվում է ՀՀ կառավարության 2012 թ.-ի օգոստոսի 30-ի <Մասնավոր | 1.Լր գոր օրե |

| | | |
|---|---|---|
| կանոնակարգում: | պահնորդական գործունեության լիցենզավորման կարգը, լիցենզիա ստանալու մասին հայտի և լիցենզիայի ձևերը հաստատելու մասին> N 1152-Ն որոշմամբ, սակայն դրանում առկա են անհստակություններ, հստակ չէ լիցենզավորող մարմնի իրավասությունների շրջանակը, վերանայման կարիք ունի քննարկման արդյունքների բողոքարկման ժամկետը: Նույն խնդիրն է ծագում նաև թիկնապահի և պահնորդի որակավորման ստուգման ընթացակարգի հետ կապված: | 2. Վ<br>իրա<br>բան<br>կա |
| 12.Ճանապարհապարեկային գործառույթների իրականացման ժամանակ անշարժ և շրջիկ ծառայության իրավական հիմքի ոչ հստակ կանոնակարգում և մեկնաբանում, անիարկի կանգնած /անշարժ ծառայության իրականացում | ՀՀ Կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի «Ճանապարհապարեկային ծառայության իրականացման կարգը սահմանելու մասին» N 1769-Ն որոշման համաձայն կանոնակարգվում են ՀՀ Ճո ճանապարհապարեկային ծառայության իրականացման ձևերը, սակայն վիճահարույց է ժամանակավոր անշարժ ծառայության բովանդակության մեկնաբանությունը, մասնավորապես վարորդների կողմից կատարված իրավախախտումների փաստերը հայտնաբերելը և իրավազանց անձին պատասխանատվության ենթարկելը ոստիկանության ծառայողների կողմից ճանապարհների առանձինհատվածներում անիարկի կանգնեցված վիճակում գտնվող ոստիկանության տրանսպորտային միջոցից: | 1.Լր<br>թվա<br>«Ճա<br>ծառ<br>սահ<br>հաս<br>իրա<br><br>2. Ճ<br>որը<br>տրա<br>կան |
| 13 Մարզերի մեծ մասում տրանսպորտային միջոցների հաշվառման դյուրացված՝ Երևան քաղաքում ապահովված պայմանների բացակայություն | Երևան քաղաքում հաջողությամբ ներդրվել և իրականացվում է տրանսպորտային միջոցների հաշվառման, հաշվառումից հանելու գործընթացը՝ համակարգված, նույն սպասասրահի շրջանակներում, մինչդեռ մարզերում նույնական կանոնակարգում ապահովված չէ, հատկապես գույքահարկի պարտավորության կատարման վերաբերյալ տեղեկանքի՝ այդ օրվա դրությամբ անմիջական ապահովման անհնարինության պատճառով, ինչն էլ հանգցնում է բնակիչների համար լրացուցիչ ծախսերով Երևան հասնելու անհրաժեշտութան, հանգեցնում հերթերի: | 1.Մ<br>տրա<br>կար<br><br>2. Տ<br>տրա<br>հաշ<br>Երև<br>բաց<br>պա<br><br>ՀՀ<br>ին Ն<br>ՀՔԲ<br>ծառ<br>նա |

| | | |
|---|---|---|
| 14. Վարորդի պահանջով ՃՈ աշխատակիցների կողմից դյուրակիր տեսախցիկների անջատման հնարավորություն | Թեև ՃՈ անձնակազմի հանդերձավորումը ապահովված է տեսախցիկներով, սակայն, հիմնականում այդ մասին վարորդին տեղեկացնելուց հետո վարորդին հարցնում են, թե արդյոք նա ցանկանում է որ այն միացված մնա: Որպես կանոն, այդ առաջարկից հետո վարորդը պահանջումէ դրանք անջատել, ինչն էլ անիմաստ է դարձնում ներդրված այս համակարգի գոյությունը: | Տեւ անչ բաց նալ կա |
| 15 ՃՈ, անձնագրային և վիզաների վարչության աշխատակիցների կողմից՝ իրենց գործառույթների իրականացման նպատակով այլ կառույցներից (Քաղաքացիական կացության ակտերի գրանցման՝ ՔԿԱԳ, կադաստր, նոտարական մարմիններ)անհրաժեշտ տեղեկանքներ ստանալու համար քաղաքացիների ուղղորդում դեպի այդ կառույցներ | ՀՀ Ոստիկանության ՃՈ, անձնագրային և վիզաների վարչության համար ապահովված չէ էլեկտրոնային արագ հարցման հնարավորությունը՝ ՔԿԱԳ, կադաստրի, նոտարական մարմիններ, ինչն էլ հանգեցնում է ծառայությունների մատուցման ժամանակ քաշքշուկի | Ներ նալ և վ կա արւ հնմ կան |
| 16 Հստակ չէ ոչ սթափ վիճակում, ինչպես նաև տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված տրանսպորտային միջոց վարող անձին պատասխանատվության ենթարկելիս հետևող պատասխանատվությունը | Քննարկվող խնդրի վերաբերյալ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի դրույթները՝ հոդված 126 և քրեական օրենսգրքինը՝ հոդված 243.1 նույնաբովանդակ են, ուստի նման իրավախախտում հայտնաբերելիս ոստիկանության աշխատակցի կողմից հայեցողական մոտեցման, չարաշահման հնարավորություն է առկա | Ներ նալ իրս քրե վիճ տրւ իրս միջ պա հաս |
| 17 Անձնագրային և վիզաների վարչությունում (այսուհետ՝ ԱՎՎ) վճարային տերմինալների գործարկման՝ պետտուրքի վճարման պարագայում՝ նշված սարքերի կողմից մանրի վերադարձման անհնարինության պարագայում, կանխիկ գումարի հետ աշխատակիցների առնչման հնարավորություն | ԱՎՎ –ում տեղադրված TELLCELL տերմինալները հնարավորություն չունեն վերադարձնել մուտք արված գումարի մանրը, այլ անհրաժեշտություն է առաջանում դրանք փոխանցել հեռախոսահամարների, ինչն արդարացված չէ կամ բնակիչները խնդրում են աշխատակիցներին մանրել գումարը, ինչը առաջանցում է կանխիկ գումարի հետ ոստիկանության աշխատակիցների անիարկի առնչություն | 1.Ե ծա Կեն բա թղ մես 2. Ն վճւ |
| 18 ՃՈ աշխատակիցների կողմից | Գործող օրենսդրությունը չի հստակեցրել ՃՈ | 1.Ն |

| | | |
|---|---|---|
| իրավախախտման համար կանգեցված վարորդների հետ շփման ընթացակարգի թերացումներ | աշխատակիցների կողմից իրավախախտման համար կանգեցված վարորդների հետ շփման ընթացակարգը, ինչն էլ չարաշահումների ռիսկ է պարունակում | նա<br>պա<br>իրս<br>կող<br>իջն<br>աշի<br>պա<br><br>2.Ճ<br>վեր<br>կա<br>տեւ<br><br>3. Ս<br>աշի<br>իրս<br>վա<br>ընթ<br>պա<br>նմա<br>կա<br>պա<br>տեւ<br>ժա |
| 19 Ոստիկանության կողմից առողջապահության հաստատությունների կողմից հաղորդված ահազանգերին արձագանքելու պարտականության ոչ հստակություն | ՀՀ ներքին գործերի նախարարի և առողջապահության նախարարի 1996 թվականիօգոստոսի 5-ի համատեղ ցուցումի համաձայն՝ բժշկական կազմակերպությունները ոստիկանությունը տեղեկություններ պետք է հաղորդեն միայն «քրեական բնույթի» վնասվածքների վերաբերյալ, սակայն գործնականում մարմնական վնասվածքների բոլոր դեպքերն անխտիր փոխանցվում են ոստիկանությանը, ինչն էլ ոստիկանության աշխատակիցների համար հայեցողական մոտեցման, քշքշուկի հնարավորություն է ստեղծում | Ներ<br>նա<br>կա<br>վոր<br>իմս |
| 20 Պարտապանների հետախուզման գործառույթների իրականացման գործընթացում ոստիկանության մասնակցության ոչ հստակ կանոնակարգում | ՀՀ օրենսդրությամբ սահմանված է ոստիկանության պարտականությունը՝օժանդակելիարկադիրկատարմանծառայությունն երինդատականվճիռներիևդատավճիռներիկ ատարումնապահովելիս: Եթե քրեական գործերով հետախուզվողների պարագայում ոստիկանությունը իրավասու է կիրառել սահմանափակումներ, ապա պարտապանների պարագայում Ոստիկանության լիազորություններն օրենսդրորեն սահմանափակվում են պարտ | 1.Ո<br>ելիե<br>Ներ<br>վա<br>(այ<br>լուն<br>ր:<br><br>2.Ք |

ապանանձիբնակությանվայրիպարզմամբ,
վերջինիսհետախուզմանմասինիրազեկելով,
քաղաքացուպարզվածհասցենՀՀարդարադ
ատությաննախարարությանԴատականակտ
երիհարկադիրկատարման (այսուհետ՝ԴԱՀԿ)
ծառայությանըտրամադրելով:
Այնուհանդերձ, այդ մասին
պարտապաններին իրազեկելու ոչ
բավարար մեխանիզմները ոստիկանության
աշխատակիցների կողմից հնարավոր
չարաշահումների հավանականություն են
պարունակում:

վոր
ւցո
ցվե
բեր
թնե
րնկ
ածր

3.Ս
պա
վեր
հան
քա
հա
սա
հան

4.Ս
ել դ
տա
ակ
ւթյ
ացն